ՏԻՐԱՊԵՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XII—XIII ԴԱՐԵՐՈՒՄ

(Նախնական դիտարկումներ)

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

XII—XIII դարերում Հայաստանի ավատատիրական հասարակությունում տիրապետող դասակարգի սոցիալական կազմի, քաղաքական կառուցվածքի, դավանական ու մշակութային դիմապատկերի ուսումնասիրությունը գիտական մեծ կարևորություն է ներկայացնում։ Հետազոտողները այդ ժամանակաշրջանի հայ տիրապետող դասակարգի պատմությունը լուսաբանելիս առայժմ առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերել երկու հարյուրամյակների սահմանագծում ծավալված ազատագրական մարտերի ընթացքի և այդ պայքարին մասնակից նշանավոր տոհմերի գործունեության նկատմամբ։ Այսօր ակնհայտ է, որ պատմաբանների բազում սերունդների կուտակած հսկայական նյութը փիտության զարգացման ներկա փուլում խիստ կարիք է զգում ընդհանրացման և տեսականացման։

Այս կապակցությամբ առաջադրված հետազոտական խնդիրները անխուսափելիորեն պարտադրում են պարբերացնել հայ տիրապետող դասակարգի XII—XIII դդ. պատմությունը։ Նկատի ունենալով հայկական ավատատիրական տոհմերի կենսագործունեության պատմական պայմանները, կարելի է ուսումնասիրվող հարյուրամյակների սահմաններում առանձնացնել երեք ժամանակաշրջան։

Առաջին՝ XII դարի սկիզբը—80-ական թթ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածը հնարավոր է բնութագրել որպես «Մեծ սելջուկների» սուլթանության փլուզումից հետո Հայաստանում առաջացած մահմեդական քաղաքական կազմավորումների հզորացման և հայկական տարրի քաղաքական դիրքերի սահմանափակման ժամանակաշրջան։ Բավական է նշել, որ այդ տասնամյակների ընթացքում են անհետանում հայկական իշխանական տների գրեթե բոլոր մնացորդները Հարավային Հայաստանում, ասպարեզից հեռանում են Լոռեի և Սյունյաց թագավորությունները, ծանր փորձությունների են ենթարկվում Արցախի ավատատիրական տոհմերը։ Ժամանակաշրջանի ավարտին նշմարվում են նաև ապառա քաղաքական վերածննդի սաղմերը։ Վրաց թագավորության մեջ ներգրավված շրջաններում ուժ են կուտակում տեղական հայկական ընտանիքները, որոնք կարևոր դեր են սկսում խաղալ նաև արքունիքում։ Մահմեդական ամիրայությունները մեծագույն ջանքեր թափելով են կարողանում ճնշել անեցիների ազատագրական պայքարը, որը ղեկավարում էր քաղաքային պատրիկությունը («գլխաւորք քաղաքին»)։ Հայաստանի տարածքի մեծ մասի մահմեդական_քաղաքական կազմավորումները թևակոխում են ներքին դժվարությունների և անկայունության փուլ, որը բարենպաստ նախադրյալներ է ստեղծում հայկական տարածքների ազատագրման համար։

Երկրորդ՝ 1186—1235 թթ. ժամանակաշրջանը լիովին հստակորեն է առանձնանում. այն սկիզբ է առնում 1186 թ. անեցիների կողմից Սառաքար ամրոցի գրավումով և ընդհատվում է մոնղոլական գլխավոր արշավանքի անմիջական նախօրյակին, երբ ազատագրվեցին Արաքսից հարավ ընկած Սուրմարին և Կաղզվանը։ Կարևոր է ընդգծել, որ հայկական երկրամասերի հետգրավումը արդյունք չէր որևէ բախտորոշ ճակատամարտի։ Այն իրականացվում էր տիմնականում հայկական զորաջոկատների ջանքերով, սահմանամերձ ռազմավարչական միավորների՝ կողմնակալությունների նախաձեռ-

նությամբ, թեև, անշուշտ, վրաց թագավորների օժանդակությամբ։ Հետևաբար և ակնհայտ է այդ կեսդարյա պայքարի ազդեցությունը՝ հայկական տիրապետող դասակարգի կազմում ռազմական ավագանուն բացահայտ գերիշխանություն հաղորդելու առումով։

Երրորդ փուլը սկսվում է մոնղոլների կողմից Հյուսիս-արևելյան Հայաստանի գրավմամբ (1236 թ.) և ավարտվում է Ղազան խանի գահակալության տարիներով (1295—1304 թթ.)։ Այս ժամանակաշրջանը ներքուստ բավականաչափ հակասական է։ Անշուշտ, աչքի են դարձնում արհավիրքներ։ Մոնղոլական նվաճման ընթացքում և ապա օտար երկրներում հանուն մոնղոլների մղվող պատերազմներում բնաջնջվում է հայոց զորքի զգալի մասը։ Բոլոր իշխանական տները ծանր կախվածության մեջ են ընկնում նվաճողներից, արդեն XIII դարի 60—70-ական թթ. մեծատոհմիկ ավատատերերից շատերը հարկադրված են լինում վաճառահանել հայրենական կալվածքները, խորանում է Հայաստանի տնտեսական ճգնաժամը։ Այնուամենայնիվ, մոնղոլական լծի ողջ ծանրությունը չի բացառել տիրապետող դասակարգի գործառությունը Հայաստանում, անհերքելի է հայ ավատատերերի իշխանության ամրապնդումը կախյալ գյուղացիության նկատմամբ, հայ իշխանները և ազատները ռազմաքաղաքական ուժ են ներկայացնում մոնղոլական տիրապետության ողջ պատմաշրջանում։ Նշված տատանումները միանշանակ չի կարելի գնահատել նաև մոնղոլների ռազմաքաղաքական պատմության տեսանկյունից։ Ժամանակաշրջանի հաղթական սկիզբը XIII դարի 80—90-ական թթ. փոխարինվեց ակնբախ պատերազմական անհաջողություններով, ի հայտ եկան վերահաս անկման ախտանշանները։ XIII—XIV դդ. սահմանագիծը ճակատագրական պահ էր Իրանի մոնղոլական պետության պատմության մեջ. Ղազան խանի կառավարման կարճատև շրջանում արտաքին ու ներքին դրության կայունացման փորձերի ձախողումից հետո սկսվեց իլխանության գահավեժ անկումը։

Ընդհանրացնելով կարելի է հավաստել, որ հայ տիրապետող դասակարգի կենսագործունեության արտաքին միջավայրի հայեցակետից որոշակի տիպաբանական ընդհանրություն է դիտվում XII դարի վերջի—XIII դարի սկզբի և այդ հարյուրամյակի եզրափակիչ տարիների—XIV դարի առաջին տարիների միջև։ Չափազանց նման են արտաքին հանգամանքները. քոչվորական աշխարհակալությունները փլուզվում և անկում են ապրում, հայ էթնոսի ռազմունակ հատվածը դեռ բավականաչափ տոկուն է գեթ կիսանկախ վիճակում երկիրը պահելու համար։ Հայաստանի հյուսիսային հարևանը՝ Վրաստանը, երկու դեպքում էլ առաջինն է ուշքի գալիս եկվորների հասցրած հարվածից և ի զորու է օգնության ձեռք մեկնելու։ Իրականում ամեն ինչ այլ կերպ ընթացավ։ XIII—XIV դդ. սահմանագծում հայ տիրապետող դասակարգը չհաղթահարեց պատնեշը, չկարողացավ իր շահերին ծառայեցնել XIV դարի առաջին կեսում իլխանությունում բորբոքված ներքին արյունահեղ պայքարը։ Արդեն XIV դարի կեսերից, դեռևս մինչև Լենկ Թեմուրի արշավանքները, հայ ավատատիրական ընտանիքները սրընթաց անկում էին ապրում։ Հետևաբար, անհրաժեշտ է պարզաբանել նաև հայ տիրապետող դասակարգի ներքին զարգացման օրինաչափությունները։ Միգուցե հենց խորքային, դժվարընկալելի գործընթացների վերլուծությունը կարող է օգնել XIII դարի վերջի—XIV դարի սկզբի ոչ լիովին բացատրելի երևույթների իմաստավորմանը։

Տիրապետող դասակարգի ներքին զարգացումը լուսաբանելիս ամենակարևոր խնդիրը այն սոցիալական կառուցվածքների հետազոտությունն է, որոնք գործառվել են ավատատերերի զանազան խավերի միջավայրում։ Միանգամայն բացորոշ է, որ հիմնարար սոցիալական կառուցվածքները անհամեմատ ավելի բազմակողմանի ազդեցություն ունեցող գործոններ են, քան ամենացնցող քաղաքական անցուդարձերը։ Այսպես, անվիճելի է, որ 1236 թ. կործանարար արշավանքը, կտրուկ վատթարացնելով հայ ավատատերերի նյութական վիճակը, նվազեցնելով թվակազմը, նվաճողներից կախ-

վածության մեջ գցելով ավագանու անխտիր բոլոր շերտերին, երբեք ի զորու չեղավ նորատիպ փոխհարաբերություններ առաջ բերել տիրապետող դասակարգի ներսում։ Կարելի է պնդել, որ մինչմոնղոլական ժամանակաշրջանի սոցիալական կառուցվածքների գործառությունը շարունակվում էր։ Պարզաբանելով տիրապետող դասակարգի շերտավորումը, գերակա-ստորակայական (սյուզերեն-վասալային) հարաբերությունների իրական պատկերը, հնարավոր կդառնա նաև սոցիալ-քաղաքական պատմությանը վերաբերող հավաստի եզրակացությունների հանգել։

Ավատատիրական աստիճանակարգությունը, անշուշտ, այլևայլ ժամանակաշրջաններում միևնույն պատկերը չի ներկայացրել։ Նույնիսկ XII—XIII դդ. տարբեր ժամանակահատվածներում գերակա-ստորակայական հարաբերությունների շղթայի օղակները, ավատատիրական սանդուղքի աստիճանները միաչափ չեն եղել։ Առկա նյութերը ցույց են տալիս, որ ներավատատիրական փոխհարաբերությունները արտացոլող «բուրգը» առավել բարդ կառուցվածք է ունեցել XIII դարի սկզբում և 1236 թ. մոնղոլական արշավանքին հաջորդող տասնամյակների ընթացքում։ Գերակա-ստորակայական հարաբերությունների շղթան այսպիսի պատկեր էր ներկայացնում. վրաց թագավորներ[1]—Զաքարյաններ[2]—Զաքարյանների անմիջական ստորականեր[3]—Զաքարյանների ստորակաների ստորականեր[4]։ Ավատատիրական աստիճանակարգության ավելի ստորին սանդուղքների վերհանումը կապված է դժվարությունների հետ։ Միջին հողատերերի մեծաթիվ շերտը, որի շարքերից էլ համալրվում էր տիրապետող դասակարգը, բավականաչափ լավ է ներկայացված վիմական արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում։ Այդ վկայությունների բանաձևային բնույթը, սակայն, տվյալներ չի

1 Մոնղոլական շրջանում վրաց թագավորները համարվում էին միայն անմիջականորեն իրենց հետ կապված հայ ավատատերերի գերակաները։ Այդ խմբի մեջ մտնում էին վրաց արքունիքում պաշտոններ վարող տոհմերը (Զաքարյաններ, Մահկանաբերդցիներ, Օրբելյաններ) և այն ընտանիքները, որոնց տիրույթների նկատմամբ վերահսկողությունը մոնղոլները հանձնարարում էին վրաց արքաներին։ Օրինակ, Արղուն խանը 1284 թ. գահ բարձրանալիս հատուկ բարեհաճություն դրսևորեց Դեմետրե II-ի նկատմամբ, «և ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան և զտունն Շահանշահեան և զԶագեցին և զորգիսն Մաղուն աթաբէկին» (տե՛ս Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական. Մոսկվա, 1861, էջ 312)։

2 Զաքարե ամիրսպասալարը, օրինակ, «բարեպաշտ և թագոհաց թագոհոյն Թամարի... հաւատարիմ ծառայ» է կոչում իրեն Անիի արձանագրություններից մեկում (տե՛ս Դիվան հայ վիմագրության, 1, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 58), նույն փոխհարաբերությունները այլ բառերով հավաստելով նաև Հաղբատի 1201 թ. արձանագրությունում. «Տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուհւոյ» (տե՛ս Վիմական տարեգիր. Պետերբուրգ, 1913, էջ 43)։

3 Ավատատիրական արիստոկրատիայի այդ խավի մեջ մտնում էին Բուբայանները, Դոփյանները, Համաղասպյան—Մամիկոնյանները, Հոնենք, Շոթոռիկյանները, Պռոշյանները, Վաչուտյանները, Օրբելյանները. տե՛ս Գ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ. Անթիլիաս, 1969, էջ 7—10։

4 Դատելով ուղղակի վկայություններից, գլխավորապես մանր ու մասամբ նաև միջին հզորության ավատատերերի այս խավը, սովորաբար, իր կարգավիճակը պահպանում էր մեկ սերնդի կյանքի ընթացքում։ Այդպիսիք են Բուբա իշխանի ստորակա Հայրաձայը (տե՛ս Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 314), Տիգրան Հոնենցի «ծառայ» Եղբայրիկը (տե՛ս Դիվան հայ վիմագրության. 1, էջ 7), Շոթոռիկյաններին ենթակա «պատրոն Բռնաւոր»-ը (տե՛ս Ղ. Ալիշան. Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 128—129։ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 193—194)։ Երկու սերունդով են ներկայացված Համաղասպյան-Մամիկոնյանների ստորակա Սեվձիյանները (տե՛ս Գ. Սարգսյան. Դեղի «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը.—«Էջմիածին», ԺԱ—ԺԲ, էջ 46։ Դիվան հայ վիմագրության, III, կազմեց Ս. Բարխուդարյան. Երևան, 1967, էջ 171)։ Միակ բացառությունը, թերևս, կազմում են Օրբելյանների սպարապետներ Շահուռնեցիները, որոնք հիշատակվում են չուրջ մեկդարյա ժամանակաշրջանում (տե՛ս Գ. Գրիգորյան. Սյունիքը Օրբելյանների օրոք. Երևան, 1981, էջ 58—62)։

տրամադրում այդ ակնհայտորեն խիստ ունևոր նվիրատուների, պատվիրատուների սոցիալ-քաղաքական կարգավիճակը պարզաբանելու համար։ Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ տիրապետող դասակարգի ստորին շերտերի կազմը առավել անհաստատունն էր, այն անընդհատ փոփոխվում էր «նոր մարդկանց» հայտնվելու և որոշ ընտանիքների ասպարեզից հեռանալու հետևանքով։

Նկատի ունենալով սոցիալական կառուցվածքների ավանդականությունը, սոցիալական համակարգերի մեջ մտնող տարրերը հետազոտելիս կարելի է օգտագործել նաև հաջորդ ու նախորդ պատմաշրջանների համաբնույթ նյութերը, կատարել պատմահամեմատական զուգադրումներ նաև այլ տարածաշրջանների համանման երևույթների հետ։ Այսպես, հայտնի է, որ գերակա-ստորակայական կապերի հաստատումը սրբագործող արարողությունները խորհրդանշական խմաստավորում են ունեցել և հնագույն ժամանակաշրջանների վերապրուկներ են միջնադարյան արևմտաեվրոպական հասարակություններում։ Ժամանակակից հետազոտողները նույնիսկ համեմատության եզրեր են տեսնում այդ միջնադարյան ծեսերի և ավանդապահ հասարակություններում այսօր էլ գոյություն ունեցող համանման սովորությունների միջև[5]։ Այս կապակցությամբ ուշադրավ է մեր ժողովրդական վեպում պատկերվող որդեգրման սովորույթի կապը հոր և որդու փոխհարաբերությունների հաստատում հավաստող միջնադարյան արարողությունների հետ։ Հայ պատմիչները առանձին ակնարկներով են անդրադարձել այդ հատուկ ծիսակատարություններին. հնարավոր է, այդ ամենը նրանց համար առօրեական ու անհետաքրքիր է եղել։ Այդ պատճառով էլ առանձնահատուկ ուշադրության է արժանի խաչակրաց պատմիչներից Ալբերտ Ախենցու վկայությունը 1098 թ. Ուռհայում տեղի ունեցած այդպիսի արարողության վերաբերյալ։ Ընդ որում, եվրոպացի պատմիչը շեշտում է այդ ծիսակատարության տեղական, հայկական բնույթը։ Այդ ծեսի կատարումից հետո էր, որ խաչակրաց առաջին արշավանքի առաջնորդներից Բալդուին Ցլանդրացին հուշակվեց Ուռհայի հայ իշխան Թորոսի որդեգիրը, այսինքն՝ ստորական ու որոշակի իշխանություն ձեռք բերեց քաղաքում[6]։

Մեկ այլ զուգահեռ. Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում իրեն գերակայի հովանավորությանը հանձնելիս ստորական ծնկի էր իջնում և ձեռքերը դնում սյուզերենի ձեռքերի մեջ։ Նույնատիպ ծիսակատարության գոյության մասին է վկայում Ստեփանոս Օրբելյանը։ Պատմելով Ելիկուզ աթաբեկի կողմից որդուն՝ Մուհամեդ Փահլավանին, Ելիկոմ Օրբելյանի խնամքին հանձնելու մասին, հայ պատմիչը գրում է. «Զձեռս նորա (Մուհամեդ Փահլավանի—Հ. Մ.) դնէ ի ձեռն Ելիկումին և ասպարէ նմա ասելով. դու դմա հայր եր և դա՝ քո որդի»[7]։ Թվում է, գերակայի՝ ստորակային համբուրելու հանդեսային արարողությունն է պատկերում Հովհաննես Դրասխանակերտցին, պատմելով Յուսուֆի կողմից Դավիթ և Գուրգեն Գնունի եղբայրներին իր կողմը գրավելու մասին. «Բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնաշի և բեհեղս նոցա մատուցանէր, և կամարս և մանեակս ոսկեղէնս և նժոյգս սրավարս՝ ճոխապաճոյճս ի զէն և ի զարդու. և ապա

---

[5] Տե՛ս J. Le Goff. Le rituel symbolique de la vassalité.—In: Pour un autre Moyen Age. Paris, 1977, p. 340—420.

[6] Տե՛ս М. А. Заборов. История крестовых походов в документах и материалах. М., 1977, с. 88։ Վաղ միջնադարյան հայ պատմիչների և «Սասնա ծռերի» վկայությունների հիման վրա որդեգրության սովորության հինավուրց արմատների մասին ուշագրավ տարկումներ է կատարել Ռ. Պետրոսյանը, տե՛ս R. Bedrosian Traveaxtuiwn in Ancient Armenia.—Armenian Review. Summer 1984, vol. 37, № 2—146, p. 23—47.

[7] Ստեփանոս Օրբելյան, էջ 288։

զձեռս իւր ի նոսա կարկառեալ և զիրկս զպարանոցօքն արկեալ և հուպ ընդ հուպ ի համբոյր մերձեցուցեալ զնոսա այնպէս շոգմոգէր»[8]։

Խոսելով XII—XIII դդ. տիրապետող դասակարգի մասին չպետք է աչքաթող անել մի կարևորագույն պարագա՝ հայ ավատատիրական տների զարգացման օրինաչափությունները, քաղաքական վիճակը, ռազմական ու տնտեսական հզորությունը Հայաստանի տարբեր գավառներում միատեսակ չեն եղել։ Այսպես, Հարավային Հայաստանում՝ Սասունում, Տարոնում, Զորրորդ Հայքում իշխանական տները կորցրել են քաղաքական իշխանությունը դեռևս XII դարում և այսպիսով խստորեն զանազանվում են Հյուսիս-արևելյան Հայաստանի ավատատիրական տոհմերից իրենց ճակատագրով։ Աշխարհիկ ու հոգևոր իշխանության զուգակցումը քնորոշ է այդ տարածաշրջանի տոհմերից միայն Աղթամարում ապաստանած Խեդենեկյանների համար։ Իրենց հերթին, Արաքսից հյուսիս ընկած շրջանները, ընդհանուր պատկեր ներկայացնելով հանդերձ, զգալիորեն զանազանվում են միմյանցից հայկական տոհմերի թվակազմի ստվարացման և բարձրացման ժամանակի առումով։ Լոռեն ու Կայենո գավառը ավելի շուտ են բռնում վերածնման ուղին, քան Շիրակը ու Արագածոտնը։ Արցախում XII—XIII դդ. սոցիալական զարգացման մեջ կտրուկ շրջադարձեր չեն դիտվում, ուրույն ուղիով է ընթանում Սյունիքը։ Համեմատությունները շարունակելու կարիք չկա, քանի որ պարզ է լոկալ հետազոտությունների անհրաժեշտությունը։ Առավել ևս, երբ առկա վիմագրական նյութը, գերազանցապես նաև հիշատակարանները, ճշգրտորեն տեղորոշվում են և հնարավորություններ ընձեռում առանձին երկրամասերի սահմաններում մասնավոր հետազոտությունների համար։ Ամբողջ Հայաստանում տիրապետող դասակարգի դրության, սոցիալական կազմի, զարգացման միտումների և այլ առանցքային հարցերին կարելի է անդրադառնալ միայն բոլոր երկրամասերին վերաբերող նյութը վերլուծելուց հետո։

Այսօր հազվադեպ են այն հետազոտությունները, որոնք լուսաբանում են հայ ավատատիրական ընտանիքների դավանական քաղաքականությունը, մշակութային բնութագիրը, փոխազդեցությունները այլ էթնիկական ու կրոնական խմբերի հետ։ Հրապարակի վրա եղած տեսակետներն էլ ոչ միշտ են ընդունելի այն պատճառով, որ ընդհանրացումները կատարվել են մասնակի փաստերի հիման վրա։ Իսկ փաստերը ցույց են տալիս, որ միևնույն ընտանիքի անդամներն անգամ կարող էին տրամագծորեն հակառակ վարքագիծ որդեգրել (Զաքարե ամիրսպասալար-Իվանե աթաբեկ), ենթարկվել Հայաստանի զանազան շրջաններում բավականաչափ տարբեր իրավիճակների ազդեցությանը։ Ամենաուշագրավը այն հանգամանքն է, որ հայ իշխանների համար երկարնակության անցնելը ամենևին էլ չէր նշանակում խզել կապերը հայրենի մշակույթի, մայրենի լեզվի և նույնիսկ միաբնակ հոգևոր կենտրոնների հետ։ Այսպես, երկաբնակ Զաքարյաններից շատերի համար նվիրական էր համարվում կապը տոհմական Սանահնի վանքի հետ, իսկ Մահկանաբերդցիները շարունակում էին հովանավորել իրենց ընտանեկան հանգստարան Հաղբատին։ Այսպիսով, տոհմական ավանդները վեր էին դասվում դավանական արժեքներից։ Հայ իշխանների «վրացիացման» կամ «մահմեդականացման» մասին վերացական հայացքները, որոնց հիմքը դավանափոխության փաստն է, կարող են համոզիչ դիտվել միայն էթնիկական դիմահեղումը փաստարկող իրողությունների վկայակոչման պարագայում։ Տեսական առումով ճիշտ այս հայեցակետին պետք է հավատարիմ մնալ նաև հակառակ գործընթացը լուսաբանելիս։ Խոսքը վերաբերում է այլ էթնիկական

---

8 Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս. 1912, էջ 252։ Կարելի է չկասկածել, որ պատմիչը հաղորդում է հատուկ արարողության և ոչ թե կենցաղային միջադեպի մասին։ Մինչ այդ հեղինակը պատմում է, թե ինչպես էր Սմբատ I-ին դավաճանել Սյունյաց իշխանը և այցելության գնացել Ափշինին։ Դերակա «հայրը» ներել էր «որդուն»։ Արքան իշխանին «գրկալիր սիրով առ ինքն յանձանձէր ածել՝ իբրև զորդի սիրելի մեծապատիւ պերճութեամբ զնա շքեղացուցեալ» (նույն տեղում, էջ 172)։

պատկանելության ավատատիրական ընտանիքների Հայաստանում ունեցած ճակատագրին, հայ իշխանական տների վրացուհի, մահմեդական հարսների դավանական ու լեզվական հետագա կացությանը։ Ընդհանրապես, լեզվական, մշակութային, դավանական իրավիճակների պարզաբանումը առավել բարդ խնդիրներից է։ Հարցերի այդ խմբի լուսաբանումը ենթադրում է տարբեր մասնագետների (պատմաբաններ, հնագետներ, արվեստաբաններ) ջանքերի զուգակցում և ինտերդիսցիպլինար հետազոտական եղանակների մշակում։

Մեր համոզմամբ, XII—XIII դդ. հայ տիրապետող դասակարգի ուսումնասիրության բնագավառում հետագա առաջընթացը կապված է լինելու հարցաթերթիկային մեթոդիկայի կիրառման հետ։ Հարցաթերթիկների հիման վրա է հետազոտվել XI—XII դդ. Բյուզանդական կայսրության տիրապետող դասակարգի սոցիալական կազմը[9], այդ մեթոդիկայի հեռանկարայնությունը ընդգծում են արևմտաեվրոպական միջնադարը ուսումնասիրողները[10]։ Այդ հետազոտական եղանակը ենթադրում է տիրապետող դասակարգը ներկայացնող առանց բացառության բոլոր տոհմերի և դրանց անխտիր բոլոր անդամների մասին ըստ հնարավորին ճշգրիտ տվյալների արձանագրում։ Հավաքված նյութը այնուհետև ամփոփ ներկայացվում է ցանկերի ու աղյուսակների տեսքով և հնարավորություններ ստեղծվում քանակական վերլուծության փորձերի համար։ Այդպիսի թեմատիկ, պրոբլեմային աղյուսակներն ու ցանկերը անհնարին է կազմել առանց նախնական ծավալուն աշխատանքի։ Հետազոտության այս սկզբնական փուլում է, որ ծագում են հայկական նյութով պայմանավորված բազմաթիվ դժվարություններ։ Ի դեպ, դրանք անխուսափելիորեն առաջանում են նաև այլ տարածաշրջանների հասարակությունները ուսումնասիրելիս և բխում են առաջադրված հարցերին հստակ պատասխան տալու խիստ սուղ հնարավորությունից։

Հարցերի հարցը ծառանում է ամենասկզբում. ի՞նչ բովանդակություն է ունեցել XII—XIII դդ. Հայաստանում «տիրապետող դասակարգ» հասկացությունը, ինչպիսի՞ տկզբունքներով է հնարավոր առաջնորդվել որևէ տոհմի սոցիալական կարգավիճակը որոշելիս, կոնկրետ ո՞ւմ ընդգրկել հարցաթերթիկներում։ Բարեբախտաբար, XII—XIII դդ. հայկական տկզբնաղբյուրները հիմք են ընձեռում տիրապետող դասակարգի միջնադարյան հայեցակերպի հարցերում կողմնորոշվելու համար։ Կարելի է հավաստել, որ այդ հարյուրամյակների ընթացքում ժամանակակիցները «տիրապետող» (այժմյան դիտական ընկալմամբ) են համարել այն հասարակական խմբերին, որոնք առանձնացել են ծագումով, կառավարման համակարգում գրաված դիրքով, սոցիալ-քաղաքական բարձր կարգավիճակով, նյութական կացությամբ, յուրահատուկ էթիկայով։ Այս բնորոշ հատկանիշները, ամբողջությամբ կամ թերի, տարբեր հերթականությամբ հանդես են գալիս անվերապահորեն տիրապետող դասակարգին պատկանող տոհմերի և նշանավոր անհատների բնութագրերում։ Տիրապետող դասակարգի գերիշխող հայեցակերպը պարզաբանելուց, ժամանակաշրջանի պատկերացումներում ավանդականի ու նորի հոխհարաբերությունները ճշտելուց հետո էլ, սակայն, «ստորջրյա խութերը» չեն վերանում։ Առանձնապես բարդ է այդ դասակարգի ստորին շերտերի (մանր հողատերեր և զորահրամանատարներ, հարկահավաք պաշտոնյաներ, ֆինիստերիալներ) իրական կարգավիճակի որոշումը։ Այդպիսի սոցիալական խմբերի պատկանելությունը տիրապետող դասակարգին առավել վստահությամբ է հնարավոր պարզել, եթե համապատասխան վկայությունները հանդիպում են պատմիչների աշխատություններում։ Այդ տեղեկությունների առանձնահատկությունն այն է, որ հեղինակները իրենց բնութագրումներում գերադասել

---

9 Տե՛ս А. П. Каждан. Социальный состав господствующего класса Византии XI—XII вв. М., 1974; Он же. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв. Ереван, 1975.

10 Տե՛ս Ցու. Բեսսմերտնիի գրախոսությունը Ա. Կաժդանի վերոհիշյալ աշխատությունների մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 236—242։

են ավանդական տերմինները և առաջնորդվում են երկարատև ժամանակահատվածների իրականությամբ։ Այնուամենայնիվ, XII—XIII դդ. տիրապետող դասակարգի մասին ամենալիարժեք նյութը պարունակում են վիմական արձանագրությունները։ Արձանագրություններ թողնողների սոցիալական դիրքի հարցում կողմնորոշվելու համար օգտակար են նաև բանաձևային նախաբանների քննությունը (իշխանական կամք արտահայտող նախաբանները գրեթե միշտ հանդիսավոր են), վիմագրման տեղը (եկեղեցական շինությունների ամենապատվավոր տեղը հատկացվում է կտիտորական արձանագրություններին), արձանագրված նվիրատվությունների չափը։ Վիմագրերը գնահատելի են նաև այն առումով, որ անպայմանորեն կապ են արտացոլում արձանագրման վայրի և վանքին միաբանողի, նվիրատուի միջև։ Սովորաբար, արձանագրման վայրը տոհմական հանգստարան է, նվիրատուն խնամիական կապեր ունի վանքի հովանավորի հետ, անձնական մտերմություն է պահպանել («սնուցած»—«սնուցող») վանքի պատրոնի հետ։ Հիշատակարանային վկայությունները լիակատար են արտացոլում ընտանիքների կազմը, ներտոհմային և միջտոհմային առնչությունները, սակայն նախատեսված են նեղ միջավայրի համար, աշառու են և չեն կարող համեմատվել իրավական փաստաթղթի արժեք ունեցող արձանագրությունների հետ։

Հայկական սկզբնաղբյուրների թվարկված երեք խմբերն էլ, անշուշտ, լիովին չեն արտացոլում XII—XIII դդ. տիրապետող դասակարգի ողջ կազմը։ Միանգամայն հնարավոր է, որ որոշ ընտանիքներ դուրս մնան համապատասխան հարցաթերթիկներից հետազոտողի թյուրընկալման հետևանքով։ Այսպիսով, նախապես արդեն հայտնի է, որ տիրապետող դասակարգը ավելի մեծ է եղել, քան այն ներկայանում է ըստ հարցաթերթիկների։ Առկա նյութերի հիման վրա մեզ հաջողվել է կազմել շուրջ ութսուն տոհմերի վերաբերյալ տվյալներ պարունակող հարցաթերթիկներ։ Ընդ որում, որպես տիրապետող դասակարգի լիարժեք անդամներ, հարցաթերթիկներում ընդգրկել ենք այն ընտանիքները, որոնք հայտնի են առնվազն երկու սերնդի (հայր ու որդի) ներկայացուցիչներով։ Առանձին հաշվարկման ենք ենթարկել, Ա. Կաժդանի արտահայտությամբ, «մեկ սերնդի ավագանուն»[11]։ Այն ներկայացնում են կարճատև ժամանակահատվածի ընթացքում միայն տիրապետող դասակարգի մեջ ընդգրկված և զանազան պատճառներով վերնախավից դուրս մղված անձինք։ Ենարավոր է, որ նրանց մի մասը նույնիսկ պատկանում է նշանավոր տոհմի, բարձր դիրք է գրավել նաև հետագայում, սակայն մենք հարկադրված ենք գնահատել առկա տվյալները։ Չնայած իրենց կցկտուր լինելուն, այդպիսի անձանց մասին տվյալները գերազանցապես թվագրված են։ Այսպիսով, «մեկ սերնդի ավագանու» մասին հարցաթերթիկային տվյալները ճշգրտորեն տեղորոշվում են ժամանակային սանդղակում և, զուգակցվելով տոհմերին նվիրված հարցաթերթիկների հետ, կարող են որոշակի եզրակացությունների համար հուսալի հիմք ծառայել։ Մասնավորապես, հնարավոր է պատասխան տալ XII—XIII դդ. սոցիալական պատմության առանցքային խնդիրներից մեկին՝ տիրապետող դասակարգի սոցիալական շարժունակության (մոբիլության) հարցին։

Ներկայացված նախնական դիտարկումները հնարավոր կլինի լրացնել ու խորացնել կազմված հարցաթերթիկների հրապարակումից հետո։ Այդ պարագայում հետազոտողները հնարավորություն կստանան ստուգելու հավաքված տվյալների հավաստիությունը և կարող են ինքնուրույն հավելումներ ու եզրահանգումներ կատարել։

---

[11] А. П. Каждан. Социальный состав господствующего класса Византии XI—XII вв., с. 20.

ГОСПОДСТВУЮЩИЙ КЛАСС В АРМЕНИИ В XII—XIII ВЕКАХ

(Предварительные наблюдения)

А. Г. МАРГАРЯН

Резюме

Изучение социального состава, политической организации, конфессиональной ориентации и культурного облика господствующего класса армянского феодального общества представляет большой научный интерес. Успешное освещение истории класса феодалов во многом зависит от периодизации. Предлагается разделить исследуемую эпоху на три периода: I (начало XII в.—первая половина 80-х годов столетия)—времена усиления мусульманских государственных образований и ограничения политических позиций армянских феодалов; II (1186—1235 годы)—период освобождения армянских областей, укрепления позиций военной элиты в составе господствующего класса; III (1236 год—рубеж XIII—XIV вв.)—тяжелая эпоха борьбы армянских феодалов за выживание, потери шансов на восстановление военной и экономической мощи. В статье освещены основные аспекты проблем: вассалитет в XII—XIII вв., различия в положении господствующего класса в отдельных частях страны, характер межконфессиональных и межэтнических контактов в среде социальных верхов.